ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

375010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փող. 5

№ 1/9-18
«18» 06 2018 թ.

**Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ**

**պարոն Ա. Բաբլոյանին**

**Միջնորդագիր**
**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Մանվել Սեկտորի Գրիգորյանին ազատությունից զրկելուն համաձայնություն տալու վերաբերյալ**

ՀՀ ԱԺ պատգամավոր Մանվել Սեկտորի Գրիգորյանի կողմից նախնական համաձայնությամբ խմբի կազմում ապօրինի կերպով հրազեն, ռազմամթերք ձեռք բերելու և պահելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ վարչապետին առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում 2018թ. հունիսի 15-ին հարուցվել է թիվ 58212718 քրեական գործը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 190-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով 2018թ. հունիսի 17-ին քրեական գործի նախաքննությունն իմ կողմից հանձնարարվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով նշված քրեական գործի բարդությունը, մեծածավալ անհետաձգելի քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարգով ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ վարչապետին առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության պետերին տրվել է ցուցում՝ քննչական խմբի կազմում նախաքննություն իրականացնող երկու մարմինների քննիչներ ընդգրկելու մասին:

Քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված տվյալներով հիմնավորվել է, որ Մանվել Գրիգորյանը ապօրինի կերպով ձեռք բերելով մեծ քանակությամբ հրազեն, ռազմամթերք, պահել է դրանք իրեն պատկանող կամ իր փաստացի տիրապետության տակ գտնվող տարածքներում, ապա քննության տվյալների համաձայն՝ սկսած 05.06.2018թ.-ից ընտանիքի անդամների, ինչպես նաև այլ անձանց մասնակցությամբ սկսել է տեղափոխել, փոխադրել հրազեն հանդիսացող առարկաները տարբեր վայրեր՝ «մաքրելու» նպատակով:

Մտից հ. 5668-18
«18» 06 2018 թ.
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Այդուհանդերձ, 16.06.2018թ-ին օրենքով սահմանված կարգով իրականացված խուզարկություններով հայտնաբերվել և առգրավվել է մեծ քանակությամբ հրազեն և ռազմամթերք:

Քրեական գործի նախաքննության ընթացքում՝ 2018թ. հունիսի 16-ին, Մ. Գրիգորյանին պատկանող կամ նրա փաստացի տիրապետության տակ գտնվող առանձնատներում, ավտոմեքենաներում, շենքերում, շինություններում կատարվել են 6 խուզարկություններ, որոնց արդյունքում հայտնաբերվել և վերցվել է 26 նռնակ, 19 հակատանկային ականանետ, տրոտիլային 12 պայթաղյուս, ավելի քան 17.000 տարբեր տրամաչափի փամփուշտ այլ ռազմամթերք ու հրազեն:

Մասնավորապես.

ՀՀ ԱԺ պատգամավոր Մանվել Գրիգորյանին պատկանող՝ Արշալույս գյուղի Լճափնյա փողոց հանգստյան տուն 28 հասցեում գտնվող առանձնատանը կատարված խուզարկությամբ հայտնաբերվել է՝ Ֆ1 տեսակի 20 նռնակ, 18 «ՊԳ-7» տեսակի հակատանկային ականանետ, 13 «ՊԳ-7» տեսակի հակատանկային ականանետերի պայթուցիչ, մեկ «ՌՊԳ-7Վ» տեսակի հակատանկային ականանետ, գնդացիրի 2 փող, 7,62 մմ տրամաչափի 8.360 փամփուշտ, «ՊԿ» տեսակի ինքնաձիգի 3.128 փամփուշտ, 5,45 մմ տրամաչափի 6.690 փամփուշտ:

Մանվել Գրիգորյանին պատկանող՝ Արմավիրի մարզի Արշալույս գյուղի Լճափնյա փողոց վարչական շենք 30 հասցեում կատրված խուզարկությամբ հայտնաբերվել են 4 Ֆ1 և 2 Գ1 տեսակի նռնակներ, 400 գրամանոց «Тротиловая шашка 400г СРЕЗЬБОИ МІОХІ» գրառմամբ 12 զանգված, 5,25մմ տրամաչափի 14 փամփուշտ, 7,62մմ տրամաչափի 1.590 փամփուշտ, 5,6 մմ տրամաչափի 258 փամփուշտ, 12 մմ տրամաչափի 10 փամփուշտ, 1543 հատ տարբեր տրամաչափերի փամփուշտներ, 27 հատ «ԿԴ» պայթուցիչ, 8 հատ «ԿԴԵ» էլեկտրական պայթուցիչ, 6 հատ նռնակի ճայթիչ, հրազենի 7 դետալ, 5 հարթափող ինքնաձիգ, տարբեր տրամաչափերի փամփուշտների պարկուճներ:

Էջմիածին քաղաքի Ալավերդյան փողոց 46 հասցեում գտնվող՝ Մանվել Գրիգորյանին պատկանող տան խուզարկությամբ հայտնաբերվել է 79 հրացան, որից 1-ը՝ առանց գործարանային համարի, 39 ատրճանակ՝ փամփուշտներով, ինչպես նաև 1 հատ 7,62 տրամաչափի փամփուշտ, 2 հատ <<WINCHESTER12GA>> գրառմամբ փամփուշտ:

Նշված տան խուզարկությամբ հայտնաբերվել է նաև 71.760.000 ՀՀ դրամ, 80.000 ԱՄՆ դոլար, 67.350 եվրո, 246.500 ուկրաինական արժույթ:

Բացի այդ, Արմավիրի մարզի Արշալույս գյուղի 19 փողոց 6 և Էջմիածին քաղաքի Մաշտոցի 110 հասցեներում գտնվող շինություններում կատարված խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել է 33 տրանսպորտային միջոց, այդ թվում՝ «Ռոյս Ռոլս», «Տոյոտա Լանդ Կրաուզեր», «Մերսեդես», «Համմեռ», «Ռենջ ռովեռ սուպերչարջ», ինչպես նաև խորհրդային արտադրության՝ նաև կոլեկցիոն ավտոմեքենաներ, այդ թվում՝ զինվորական նշանակության տրանսպորտային միջոցներ:

Արմավիրի մարզի Արշալույս գյուղի Լճափնյա փողոցի վարչական շենք 30 հասցեում կատարված խուզարկությամբ՝ կենդանիներ պահելու համար առանձնացված հատվածում՝ սպասարկող անձանց համար նախատեսված աշխատասենյակում հայտնաբերվել են Երևանի թիվ 50, թիվ 197, թիվ 164, Տավուշի մարզի Չորաթան գյուղի, Վերին Ծաղկավան գյուղի, Շիրակի մարզի Ախուրյանի, Էջմիածնի թիվ 4 դպրոցների աշակերտների և ուսուցիչների կողմից հավաքագրված գումարներով ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակիցների համար որպես օգնություն ուղարկված 2067 տարա խտացրած կաթ, 160 հատ մսի պահածո, 44 հատ բանջարեղենի պահածո, 33 հատ ձեթ, 9 պարկ և 60 տուփ մակարոն, 14 տուփ թեյ, 140 հատ զուգարանի թուղթ, բժշկական տարբեր պարագաներ, դեղորայք՝ ընդհանուր 12 փաթեթ, զինվորական նախշերով պայուսակներ, 3 ստվարաթղթե տուփ ներքնաշոր:

Նշված պահածոների, խտացրած կաթի տուփերի միջից հայտնաբերվել են աշակերտների թվով 3 ձեռագիր գրառումներ՝ «Իմ քաջ զինվոր» վերտառությամբ: Նման գրառումներ առկա են նաև արկղերի վրա:

Քրեական գործի նախաքննությամբ հիմնավորվել է նաև, որ վերը նշված քննչական գործողությունների ընթացքում Մանվել Գրիգորյանը քննությանը խոչընդոտելու, սպասվող պատասխանատվությունից խուսափելու նպատակով կապ հաստատելով խուզարկության վայրում գտնվող որդու հետ, վերջինիս հրահանգել է փոխանցել Արմեն Հակոբյանին, որ նա ներկայանա խուզարկության վայր և «ամեն ինչ իր վրա վերցնի»: Բնականաբար, Մ. Գրիգորյանի հրահանգը կատարվել է, շուրջ երեսուն րոպե անց խուզարկության վայր է ներկայացել Արմեն Հակոբյանը և հայտնել, որ պահվող ողջ ռազմամթերքը պատկանում է միայն իրեն:

16.06.2018թ. Մ. Գրիգորյանը ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածով սահմանված կարգով ձերբակալվել է, ապահովվել են նրա բոլոր դատավարական իրավունքները: Վերջինիս պաշտպանի կողմից ձերբակալումը բողոքարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որի 17.06.2018թ-ի որոշմամբ բողոքը մերժվել է և Մ. Գրիգորյանի ձերբակալումը ճանաչվել է իրավաչափ:

Քրեական գործով նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ Պաշտպանության նախարարությունը սահմանված կարգով անհրաժեշտ սնունդ, ինչպես նաև զինվորական հանդերձանք է տրամադրել ԵԿՄ-ին՝ իր կանոնադրական նպատակների իրականացման նպատակով:

Բացի այդ, 2016 թվականի ապրիլյան պատերազմի օրերին բազմաթիվ քաղաքացիներ և կազմակերպություններ օգնության նպատակով առաջնագծում ծառայություն իրականացնող զինվորներին փոխանցելու համար դարձյալ ԵԿՄ-ին են տրամադրել սննդամթերք, հագուստ, տնտեսական այլ պարագաներ:

Քրեական գործի նախաքննությամբ հիմնավորվել է, որ Մ. Գրիգորյանը իր ղեկավարած կառույցին վերը նշված նպատակներով հատկացված գույքը հափշտակել է, տեղափոխել այն իրեն պատկանող տարածք՝ օգտագործելով անձնական կարիքների համար, այդ թվում՝ իրեն պատկանող կենդանիներին կերակրելու նպատակով:

Բացի նշվածից, «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ին պատկանող տարածքում ապօրինի կերպով հրազեն և ռազմամթերք պահելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնում 2018թ. հունիսի 16-ին հարուցվել է թիվ 57167918 քրեական գործը: Նույն օրը հետաքննության մարմնի աշխատակիցների կողմից խուզարկություն է կատարվել նշված ընկերությանը պատկանող, Էջմիածին քաղաքի Մաշտոցի փողոցի 19 հասցեում գտնվող շինությունում, որի ընթացքում ատրճանակից և դանակից զատ հայտնաբերվել է 36.884.370 ՀՀ դրամ, երեխաների կողմից զինվորներին ուղղված 8 նամակ, 27 հատ զինվորական կարճաթև շապիկ, 19 զինվորական գուլպա, 5 զինվորական ձեռնոց, 19 տուփ սափրվելու ածելի, 4 զույգ զինվորական երկարաճիտ կոշիկ, զինվորական հանդերձանքի այլ պարագաներ, 215 ստվարաթղթե արկղ մսի պահածո, 74 արկղ ձկան պահածո, 42 արկղ մակարոն, 8 պարկ աղ, 19 պարկ շաքարավազ, 3 պարկ լոբի, 2 պարկ ոսպ, 10 արկղ և 11 շիշ ձեթ, 8 արկղ և 23 հատ խտացրած կաթ: Նշված արկղերի և պարկերի վրա առկա են. «զինվորի համար, վաճառքի ենթակա չէ» գրառումները: Քրեական գործի նախաքննության ընթացքում տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ նշված ընկերության տնօրեն է հանդիսանում Մանվել Գրիգորյանի որդին՝ Արման Գրիգորյանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 190-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով 2018թ. հունիսի 17-ին նշված քրեական

գործի նախաքննությունն իմ կողմից հանձնարարվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը, որից հետո այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածով սահմանված կարգով միացվել է Մանվել Գրիգորյանի և մյուսների կողմից ապօրինի կերպով հրազենի և ռազմամթերքի շրջանառության դեպքի առթիվ հարուցված քրեական գործին:

Հաշվի առնելով, որ հետաքննության մարմնի և քննիչի լիազորություններն իրականացնելիս հայտնաբերվել են «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության ղեկավար անձանց, այդ թվում՝ Ազգային ժողովի պատգամավորի կողմից, կազմակերպության կարիքների համար ՀՀ պաշտպանության նախարարության, ինչպես նաև 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին առանձին քաղաքացիների և կազմակերպությունների կողմից տրամադրված առանձնապես խոշոր չափերով պարենային և այլ ապրանքների յուրացման հատկանիշներ՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչի կողմից 2018թ. հունիսի 17-ին որոշում է կայացվել յուրացման եղանակով առանձնապես խոշոր չափերով ուրիշի գույքի հափշտակության դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 62217818 քրեական գործը հարուցելու մասին: Նույն օրը նշված քրեական գործը միացվել է Մանվել Գրիգորյանի և մյուսների կողմից ապօրինի կերպով հրազենի և ռազմամթերքի շրջանառության դեպքի առթիվ հարուցված քրեական գործին:

Նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ հիմնավորվել է, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Մանվել Գրիգորյանը նախաքննությամբ դեռևս չպարզված հանգամանքներում ձեռք է բերել և իր կնոջ՝ Նազիկ Ամիրյանի, դստեր՝ Այծեմնիկ Գրիգորյանի, Էջմիածին քաղաքի բնակիչներ Սեյրան Ղազարյանի, Արմեն Հակոբյանի և այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ Արմավիրի մարզի Արշալույս գյուղի Լճափնյա փողոցի 28 և 30 հասցեներում գտնվող, իրեն պատկանող առանձնատներում ապօրինի կերպով պահել է ռազմամթերք հանդիսացող ընդհանուր թվով 17606 հատ տարբեր տրամաչափի փամփուշտ, 20 հատ «Փ-1» տեսակի ձեռքի բեկորային մարտական նռնակ, 20 «УЗРГМ-2» տեսակի մարտական պայթուցիչներ, 18 հատ կրակոցներ՝ իրենց բաղկացուցիչ մաս կազմող 13 մեկնարկային վառոդային լիցքերով, հրազեն հանդիսացող 40մմ տրամաչափի «РПГ-7В» տեսակի նռնականետ, որոնք հայտնաբերվել են նշված առանձնատներում 2018թ. հունիսի 16-ին կատարված խուզարկություններով:

Այսպիսով, Մանվել Սեկտորի Գրիգորյանը ապօրինի կերպով ձեռք է բերել և մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ ապօրինի կերպով պահել է ռազմամթերք, այսինքն՝ կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն:

Բացի այդ, ՀՀ ԱԺ պատգամավոր, «Երկրապահ կամավորական միություն» հասարակական կազմակերպության նախագահ Մանվել Սեկտորի Գրիգորյանը ՀՀ պաշտպանության նախարարությունից, Արցախի Հանրապետության պաշտպանության բանակից, քաղաքացիներից և կազմակերպություններից ստանալով հավաքագրված և իր՝ որպես ԵԿՄ նախագահի վստահությանը հանձնված և 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմին մասնակցած անձանց կարիքները հոգալու համար նախատեսված առանձնապես խոշոր չափերի արժեքով պարենային, տնտեսական ապրանքներ և հանդերձանք, որը ըստ նշանակության հասցեատերերին տալու փոխարեն, քննությամբ դեռևս չպարզված անձանց հետ հանցակցությամբ յուրացրել է: Մասնավորապես, դրանք պահեստավորելով ՀՀ Արմավիրի մարզի Արշալույս գյուղի Լճափնյա 28-րդ և 30-րդ հասցեներում գտնվող իրեն պատկանող շինություններում, Էջմիածին քաղաքի Մաշտոցի փողոցի թիվ 19 հասցեում առևտրային գործունեություն ծավալող իր հետ փոխկապակցված

«Արա և Այծեմնիկ» ԲԲ ընկերության տարածքում, ապրանքներն օգտագործել է իր հայեցողությամբ՝ անձնական կարիքների համար, այդ թվում՝ սննդամթերքը ծառայեցրել է որպես կեր՝ նշված տարածքներում պահվող վայրի կենդանիների կերակրման համար: Ընդ որում, խուզարկությամբ հայտնաբերված ապրանքներից միայն մսի, ձկան պահածոյի և խտացրած կաթի արժեքը կազմում է շուրջ 7.000.000 ՀՀ դրամ:

Այսպիսով, Մանվել Սեկտորի Գրիգորյանը ստացել և այլ անձանց հետ հանցակցությամբ յուրացման եղանակով հափշտակել է իր վստահությանը հանձնված առանձնապես խոշոր չափերով ուրիշի գույք, այսինքն՝ կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն:

Վերը նկարագրված փաստական հանգամանքները պարզվել են հետևյալ ապացույցներով.

- ՀՀ Արմավիրի մարզի Արշալույս գյուղի Լճափնյա փողոցի 28 և 30, Էջմիածին քաղաքի Ալավերդյան փողոց 46 հասցեներում գտնվող, Մանվել Գրիգորյանին պատկանող առանձնատներում խուզարկություն կատարելու մասին արձանագրություններով,
- Հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ- հետախուզական միջոցառման արդյունքում ստացված նյութերը զննելու մասին արձանագրություններով, որոնց համաձայն՝ սկսած 05.06.2018թ-ից Մ. Գրիգորյանը, վերջինիս ընտանիքի անդամները, ինչպես նաև այլ անձինք ակտիվ գործողություններ են իրականացրել Գրիգորյանի բնակարում, այլ վայրերում գտնվող զենքերը տեղափոխելու, փոխադրելու, թաքցնելու ուղղությամբ:
- Վկաների՝ Մ. Գրիգորյանին պատկանող առանձնատների աշխատակիցների ցուցմունքներով այն մասին, որ խուզարկված տները փաստացի պատկանել են Մանվել Գրիգորյանին, վերջինս հաճախակի գտնվել է նշված առանձնատներում, դրանց սպասարկումն իրականացրած անձինք գործել են նրա հրահանգներով, հայտնաբերված պահածոյացված սննդամթերքն օգտագործվել է Մանվել Գրիգորյանի կենդանիներին կերակրելու նպատակով:
- ՀՀ Արմավիրի մարզի Արշալույս գյուղի Լճափնյա փողոցի 28 և 30 հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների զննության արձանագրությամբ, որի համաձայն նշված հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ գրանցված է Մանվել Սեկտորի Գրիգորյանի սեփականության իրավունքը:
- Էջմիածին քաղաքի Մաշտոցի փողոցի 19 հասցեում գտնվող՝ «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ-ին պատկանող շինությունում խուզարկություն կատարելու մասին արձանագրությունով:
- Վկաների՝ զինվորներին պարենային օգնության ապրանքներ տրամադրած անձանց ցուցմունքներով այն մասին, որ զինվորների համար նախատեսված սննդամթերքը ՀՀ տարածքում գործող դպրոցների և այլ կազմակերպությունների կողմից տրամադրվել են նաև «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության տարածքային ստորաբաժանումներին:
- ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացված և ապացուց ճանաչված գրությամբ, համաձայն որի «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանը 2016-2018թթ. տրամադրվել է ավելի քան 190 մլն ՀՀ դրամի պարենային, իրային և վառելիքաքսուքային միջոցներ: Ընդ որում տրամադրված ապրանքների ցանկում առկա են նաև այնպիսիք, որոնք համընկնում են խուզարկության արդյունքում հայտնաբերվածների հետ:

➢ Դատաձգաբանական փորձաքննության եզրակացությունը, որի համաձայն՝ փորձաքննության ներկայացված տարբեր տրամաչափի փամփուշտները հանդիսանում են գործարանային արտադրության փամփուշտներ, ներկայացված բոլոր փամփուշտները պիտանի են կրակվելու համար և հանդիսանում են ռազմամթերք: Փորձաքննության ներկայացված 20 հատ նռնակները հանդիսանում են գործարանային արտադրության «Ф-1» տեսակի ձեռքի բեկորային մարտական նռնակներ, պիտանի են նպատակային օգտագործման համար և հանդիսանում են ռազմամթերք: Փորձաքննության ներկայացված ընդհանուր թվով 20 հատ պայթուցիչները հանդիսանում են գործարանային արտադրության «УЗРГМ-2» տեսակի մարտական պայթուցիչներ՝ նախատեսված «Ф-1» և «РГ-42» տեսակի ձեռքի բեկորային մարտական նռնակների համար, պիտանի են նպատակային օգտագործման համար և հանդիսանում են ռազմամթերք: Փորձաքննության ներկայացված ընդհանուր թվով 18 հատ կրակոցները և իրենց բաղկացուցիչ մաս կազմող 13 հատ մեկնարկային վառոդային լիցքերը գործարանային արտադրության են, նախատեսված են համապատասխան տրամաչափի նռնականետերից կրակվելու համար, պիտանի են նպատակային օգտագործման համար և հանդիսանում են ռազմամթերք: Փորձաքննության ներկայացված նռնականետը հանդիսանում է 1972թ. գործարանային արտադրության 40մմ տրամաչափի «РПГ-7В» տեսակի, «ЛГ-256» համարի նռնականետ՝ նախատեսված հակառակորդի զրահահար տեխնիկայի /հրասայլ, ՀՄՄ և այլն/, թույլ ամրաշինական կառույցների, ինչպես նաև կենդանի ուժի ոչնչացման համար, պիտանի է նպատակային օգտագործման համար և հանդիսանում է հրազեն:

Այսպիսով, քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը բավարար հիմք է տալիս ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Մանվել Գրիգորյանին սույն գործով ներգրավելու որպես մեղադրյալ և մեղադրանք առաջադրելու ապօրինի կերպով ռազմամթերք ձեռք բերելու և իր կնոջ Նազիկ Ամիրյանի, դստեր Այծեմնիկ Գրիգորյանի, Էջմիածին քաղաքի բնակիչներ Սեյրան Ղազարյանի, Արմեն Հակոբյանի և այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ Արմավիրի մարզի Արշալույս գյուղի Լճափնյա փողոցի 28 և 30, Էջմիածին քաղաքի Ալավերդյան փողոց 46 հասցեներում գտնվող, իրեն պատկանող առանձնատներում պահելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև այլ անձանց հետ հանցակցությամբ յուրացման եղանակով իր վստահությանը հանձնված առանձնապես խոշոր չափերով ուրիշի գույք հափշտակելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի

ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածը սահմանում է խափանման միջոցի կիրառման հիմքերը:

Կալանավորման պայմաններից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է, ի թիվս այլնի, դիրքորոշումներ այն մասին, որ հանցանքը կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որը բավարար կլինի անաչառ դիտորդին համոզելու, որ տվյալ անձը հանցանք է կատարել (Ilgar Mammadov v. Azerbaijan, § 88; Erdagöz v. Turkey, § 51; Fox, Campbell and Hartley v. the United Kingdom, § 32): Հետևաբար իշխանությունների կողմից միջնորդության հիմնավորվածությունն ապահովելու նպատակով գործի հիմնական հանգամանքների վերաբերյալ ընդհանուր քննություն չկատարելը կհանգեցնի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետի խախտման (Stepuleac v. Moldova, § 73; Elçi and Others v. Turkey, § 674): Ինչ վերաբերում է «հիմնավոր» հասկացության բովանդակության բացահայտմանը, ապա դա կախված է գործի բոլոր հանգամանքներից (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom, § 32):

Անդրադառնալով կալանավորման հիմքերին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է հանցագործության համար մեղադրվող անձին մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքեր. մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վտանգը (տե՛ս Stogmuller v. Austria, 1969 թվականի նոյեմբերի 10, § 15), վտանգը, որ մեղադրյալն ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը (տե՛ս Wemhoff v. Germany, 1968 թվականի հունիսի 27, § 14) կամ կկատարի նոր հանցանքներ (տե՛ս Matznetter v Austria, 1969 թվականի նոյեմբերի 10, § 9) կամ կկատարի հասարակական անկարգություններ (տե՛ս Letellier v. France, 1991 թվականի հունիսի 26, § 51): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ էության, նախատեսված են նշված հիմքերը, որոնցից յուրաքանչյուրի առկայությունը կալանավորման պայմանների հետ միասին ինքնին հիմք է անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար:

Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» կապակցությամբ իր նախադեպային իրավունքում փաստել է.

(...)

«[Հ]անցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: (...) [Կ]ասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է

ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է:

(...)

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված *(տե՛ս Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման 19-23-րդ կետերը):*

Սույն գործի փաստական հանգամանքները դիտարկելով մեջբերված իրավական դիրքորոշումների համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ քրեական գործով ձեռք բերված վերը վկայակոչված ապացույցները վկայում են, որ առկա է հիմնավոր կասկած՝ Մանվել Սեկտորի Գրիգորյանի կողմից հանցանք կատարելու վերաբերյալ: Այդ ապացույցներն անկողմնակալ դիտորդին ողջամտորեն հիմք են տալիս ենթադրելու, որ Մանվել Գրիգորյանը, ապօրինի կերպով ձեռք է բերել և մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ պահել է ռազմամթերք: Գործով ձեռք բերված փաստական տվյալները, ուղղակիորեն հաստատելով Մանվել Գրիգորյանի անմիջական մասնակցությունն այդ գործողություններին՝ վկայում են հանցանք կատարելու առավել քան հիմնավոր կասկածի, որպես կալանավորման պայմանի, առկայության մասին:

Անդրադառնալով կալանավորման հիմքերին, անհրաժեշտ է փաստել, որ Մանվել Գրիգորյանին վերագրվում են հասարակական անվտանգության ինչպես նաև սեփականության դեմ ուղղված ծանր հանցագործություններ, որոնց համար որպես պատիժ նախատեսված է 2-ից մինչև 6 և 5-ից մինչև 8 տարի ժամկետով ազատազրկում: Մանվել Գրիգորյանին մեղսագրվող հանցագործության բնույթը, այն է՝ ռազմամթերքի ապօրինի շրջանառությանը բազաթիվ անձանց ներգրավվածությունը, շրջանառվող ռազմամթերքի քանակը, ինչպես նաև բանակի զինվորների համար նախատեսված ինչպես պետական միջոցներով, այնպես էլ քաղաքացիների և կազմակերպությունների կողմից որպես օգնություն տրամադրված գույքի հափշտակությունը, որին առերևույթ կարող են ներգրավված լինել բազմաթիվ անձինք, վկայում են դրա հանրային վտանգավորության բարձր աստիճանի մասին:

Մանվել Գրիգորյանի հավանական վարքագծի կանխատեսման առումով առանձնակի դեր ու նշանակություն ունի այն հանգամանքը, որ նա արդեն իսկ ձեռնարկել է միջոցներ դատավարությանը մասնակցող անձի վրա անօրինական ազդեցություն գործադրելու ուղղությամբ: Մասնավորապես, հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման արդյունքում պարզվել է, որ խուզարկության կատարման ընթացքում՝ 2018թ. հունիսի 16-ին ժամը 10.03-ին, Մանվել Գրիգորյանը մեկ այլ անձի հեռախոսով կապ է հաստատել քննչական գործողությանը ներկա գտնվող որդու՝ Արման Գրիգորյանի հետ, գործի քննությանը խոչընդոտելու, քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակով հանձնարարել է, որ իր նշած անձը՝ Արմեն Հակոբյանը, ստանձնի ողջ պատասխանատվությունը, հայտարարի, որ ամբողջ հայտնաբերվածը ապրիլյան պատերազմից հետո բերել և պահել են այդտեղ: Ընդ որում, Մանվել Գրիգորյանի գործողությունների հետևանքով Արմեն Հակոբյանն ինչպես

խուզարկության, այնպես էլ հարցաքննության ընթացքում փաստացի կատարել է Մանվել Գրիգորյանի հրահանգը:

Վերոնշյալ հանգամանքները էականորեն բարձրացնում են ազատության մեջ գտնվելու դեպքում Մանվել Գրիգորյանի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութեր թաքցնելու և կեղծելու ճանապարհով գործի քննությանը խոչընդոտելու, քրեական օրենքով չթույլատրված նոր, այդ թվում՝ հրազենի ու ռազմամթերքի ապօրինի շրջանառության հետ կապված արարք կատարելու հավանականությունը:

Նախկինում զբաղեցրած պաշտոններով, ծավալած հասարակական գործունեության բնույթով, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակով պայմանավորված որոշակի հասարակական դիրքն ու հեղինակությունը, հանցագործության կատարմանն այլ անձանց առերևույթ մասնակցությունը, վերջիններիս նկատմամբ Մանվել Գրիգորյանի ազդեցությունը ևս հիմք են հանդիսանում ազատության մեջ մնալու դեպքում վերջինս կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու ողջամիտ կանխատեսման համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 96-րդ հոդվածով, Ազգային ժողովի կանոնակարգ Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով,

**Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ո Ւ Մ  Ե Մ՝**

Համաձայնություն տալ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Մանվել Սեկտորի Գրիգորյանին ազատությունից զրկելուն՝ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելուն:

Առդիր՝ ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը:

**Արդարադատության առաջին դասի**
**խորհրդական՝** **Ա.Ս. Դավթյան**